


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ՓՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ լրագրի ԳԱՀԻՔ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԶԱՐԱՐ	
Տարեկան ողջ դրոշմ	60
Վե՛րսնեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԷՐ	
Տարեկան	20
Վե՛րսնեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒԹԻՒՆ ԿԱՆԻՍՏԱՆԻ ԵՒ ԲՂԹԱՐԱՐԻ ԺԱԽՔԸ ԽՈՒՔԱԳՐՈՒՄԵԱՆ ՎՐԱՅ Կ՛

ԽՈՒՔԱԳՐՈՒՄԵԱՆ ՈՂՈՂՈՒՄԸ ԳՐՈՒՄԻՆԻՖ ԵՍ Զ՛ՆՆ ՏՐՈՒՐ

ԱՂԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԷՔ ԿԱՆԻՍՏԱՆԻ ՎՃԱՐԵԼԻ ԵՆ

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱՂԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

E. TOROSSIAN  
Direc. propr. du journal arménien  
ARCHALOUICE  
LE CAIRE (EGYPTE)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՂԴ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Պատ. բաժանորդներէն կը խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԴ տարոյ բաժանորդագիրը որպէս Տնօրինութեան հասցեյիս :

ԱՐՏԱՍՏՂՄԱՆԻ Պատ. բաժանորդներէն ալ ջերմասպէս կը խնդրուի, որ բարեհաճին նախորդ տարիէն մնացեալ պարտոց կցելով որպէս նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ Տարեկանի բաժանորդագիրը, եւ հարկ չը քոյոյ մասնաւոր դիմումներու, որով ընդ որոշումը մը պիտի ղրկուի ԱՐՇԱԼՈՅՍԻ տղէն բազմապատ Տնօրինութեան :

ՊԱՐՍԻՑ ԶԱՅԸ ԵՒ ԼԱՌՄԵՆԻ

ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՅԻՆ Կ. Պաշտան այցելեց և դէպի Թէհէրան ճամբայ ելաւ : Հետեալ բար ալլ ևս անպատեհութիւն մը չ'կայ ըսելու թէ ն. Կայսերական Վեհափառութիւնը, Հայկական Պատգամաւորութիւն մը ընդունեց Բարիդի մէջ :

Մեր ընթերցողները չ'մոռցան անշուշտ որ անցած տարի մեր Տնօրէնը Հայկական Պատգամաւորութիւն մը կազմեց և երախտագիտական ուղերձ մը մատուցեց Շահին երկրորդ որդի ն. Կայսերական Բարձրութիւն Մեղիք Մանուր Միրզային, երբ սա Բարիդ եկաւ : Մեր Տնօրէնը միևնոյն դազափարն ունեցաւ երբ լսեց թէ իրանի Օգոստոսիան Վեհապետը որոշած է այցելել Ճրանսա : Ուղերձ մը պատրաստեց և Պատգամաւորութիւն մը կազմեց Բարիդարնակ վեց նշանաւոր հայերէ, որոց մին էր Պ. Կ. Պաշինճաղեան, որ անոր յայտնած էր թէ կը փափաքէր Շահին մատուցանել Արարատ լեռը ներկայով իր մի փառաւոր պատկերը : Ն. Վ. Թէհէրալ Նազար Ալա, պարսկական դեսպան, անոր խոստացաւ միջամտել ն. Կ. Վեհափառութեան քով պատգամաւորութեան ունկնդրութիւն մը ստանալու համար :

Սալոնի (Շահին անձին վրայ) սպանութեան փորձը տեղի ունեցաւ այս միջոցին, և Բարիդեան թերթ մը իմացուց որ Շահը կը պատրաստուէր մեկնել Ճրանսա :

Եւ Կորնցեմու ժամանակ չ'կար : Օգոստոս 4 ին առաւօտը, այսինքն ոճիւրի փորձէն երկու օր ետքը, մեր Տնօրէնը գնաց Վեհապետներուն պալատը և պատիւ ունեցաւ տեսնելու մեծ եպարքոս Էմին-է-Սուլթան Ալի Ասկար խանը, շրջապատեալ Նազար Ալալէն և Քիթապճի Խանէն. Նորին Բարձրութիւնը մեր Տնօրէնին խնդրանքին տեղեկանալէն յետոյ, պարսկերէն լեզուաւ պատասխանեց որ անպատեհ պիտի ըլլար բաղմամբ անձերէ բազկացեալ պատգամաւորութիւն մը ներկայացնել Շահին, որ սպանութեան փորձին յուզմունքէն կատարելապէս ազատած չ'էր և մինակ հայ մը կրնար իր հայրենակիցներուն զգացմանց թարգման ըլլալ : « Գանի որ դուք պիտի բանախօսէք յանուն պատգամաւորութեան, ըսաւ անոր Սատրապալը, Ձեր ներկայութիւնը կը բաւէ : Այսօր կէս օրէն ետքը ժամը 4 ին եկէք առանձինն : » Մեր Տնօրէնը խնդրեց ն. Բարձրութեանէն բացառութիւն մ'ընել գոնէ Պ. Պաշինճաղեանին համար, որ կը փափաքէր անձամբ մատուցանել իր պատկերը : Նորին Բարձրութիւնը հաւանեցաւ :

Որոշեալ ժամուն, Նորին Վեհափառութիւն Թէհէրալ Նազար Ալա կը ներկայացնէ մեր Տնօրէնն ու Պ. Պաշինճաղեանը իր կայսերական Վեհապետին, որ զանոնք կ'ընդունի վեհապետներուն պալատին սրահը, և երկու սպասաւորներ Նորին Վեհափառութեան զիմացը կը զետեղեն Արարատ լեռան ճոխարար շրջանակուած պատկերը : Շահը՝ գլուխը ծածկուած Ասթրախանի խոյրով մը, որուն վրայ կը շողողէր խոշորագամանդ մը նստած էր թիկնաթոռի մը վրայ, շրջապատուած վեցեակ մը Պարսիկ բարձրաստիճան ազգային տարազով պաշտօնակալներէ, որոնք սաքի վրայ և անձայն կը կենային : Մուզաֆֆէր-է-Տին շարժուն և թափանցիկ մեծ աչքեր ունի, ուր կը ցուանայ բարեսիրութիւն. հակառակ իր երկայնաձիգ ընչացքներուն, որոնք պատերազմական մը երևոյթը կուտան, ամբողջ գեմքը կ'արտայայտէ անոյ մեղմազնութիւն մը, յանկուցիչ աղնութիւն մը, բընածին վեհութիւն մը :

Մեր տնօրէնը հետեւեալ բանախօսութիւնը ըրաւ :

Շարունակելի

ՍԻՕՆԱԿԱՆՆԵՐԸ, որոնք իրենց երրորդ ժողովն ունեցան Լոնտոնի մէջ, հայրենասէր հրեայներ են, որոնք կը ջանան հաւաքել

250 միլիոն ֆրանքի դրամադրուի մը, հարկաւոր գումար գնելու համար Պաշտօնիրը : Ըստ օգոստոս 20 թիւ ժուրնալի, Սուլթանը այս գումարը պահանջած է Պաշտօնիր ծախելու համար (մեր աշխատակից Պ. արդէն խմբագրական մը նուիրած է այս խնդրոյն վրայ) (Արշալոյսի 115 թիւով) :

ԹԱԻՐԻՉԷՆ Լ'Արմէնիին կը գրեն « Հազարէթ Իւլիա, Պարսկաց կայսրուհին ունկնդրութիւն մը չտրուեց Տիկնալք Ամառանիի, Մատուր Խանի և Հայրէհանի բարեգործական ընկերութեան միջոցով անուհիներուն : Կայսրուհին կը կրէր մարգարիտներով և թանկագին բարեբով պաճուճուած շրջազետ մը, և շրջապատուած էր վեց շքադիր Տիկնաներէ : Ունկնդրութիւնը երկու ժամ տեւեց, այս միջոցին երկու անգամ թէյ հրամցուեցաւ և վերջապէս ցուհիները երեք անգամ հրախրուեցան պտուղներ, անուշիկներ և պաղպաղակ շոյալուած սեղանի մը վրայ : Նորին կայսերական Վեհափառութիւնը անգամուհի Տիկնաներուն խոստացաւ զիրենք շահին ներկայացնել, Եւրոպայէն վերադարձին, և անոր յիշեցնել այսպիսի մարդասիրական ընկերութիւն մը իր բարձր հովանաւորութեան տակ առնելու մասին ըրած խոստումը (Թաւրիդի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան և ն. Վ. Պարսից Շահին ըրած խոստումին վրայ արդէն խմբագրականով մը խօսուած էր Արշալոյսի 109 թիւով) :

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ  
ԹՈՒՐԿԻԱ 1876 ԷՆ Ի ՎԵՐ  
ՏԵՏՐԱԿԻՆ ԱՌՈՒԹ  
ՀԵՂԻՆԱԿ Ս. ՓԱՓԱՉԵԱՆ

(Շարունակութիւն ն. Իստրթ թիւէն)  
Ո՛չ թէ թուրքիա ծնած ըլլալ, ո՛չ թէ տարիներով շոն բնակած ու ապրած ըլլալ՝ այլ նոյն իսկ ամիս մը, օր մը թուրքիա գտնուելի ու չը անսնել թէ արդարութիւնը իր բացարձակ բացակայութեամբ կը փայլի, կոյր ըլլալու հոմանիշ է :  
Լաւ գրած օրէնքներ կան, այո՛, այս անուրանալի է, որոնք քաղուած են գլխաւորաբար Եւրոպական օրինադիրքերէ, մասնաւորապէս « Գոտ Նարոլէօն » էն, բայց այդ օրէնքներու ամենն ալ մեռեալ տոտ մնացած են, որովհետեւ գործադիր պաշտօնեայն միշտ հակառակ օրինաց գործելու հրահանգուած է :  
Գալով առանձնաշնորհմանց մասին, մենք

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՋՈՒՐՆ ՈՒ ՋՐԱՌՈՒԺՈՒԹԻՒՆԵՐ

(Շարունակութիւն թիւ 123 «Արշալոյս» էն)

ԵՐՐՈՐԴ ԾՐՁԱՆ. — Փրօնիցի կատարած առաջին փորձերուն ժամանակ, ի Ֆրանսա, բորբոքախտուն հիւանդութիւններու հանդէպ ջրցանութեան կատարած հրաշալիքներուն ներքողները կ'ընէր Գերսան, եւ պաղ ջուրին ընդդէմահրակաթ յատկութիւնները կը յայտարարէր թանշու: Գրեթէ ամենուրեք, հիւանդանոցներուն մէջ, վերաբոյժներն ու բժիշկները ջրաբուժական եղանակներով ալիւալլ փորձեր կը կատարէին, այնպէս որ 1850 ին, ժամտաշիւրմբ պաղ ջուրով բուժելու կերպը գրեթէ ընդհանրացուցին բժշկութեամբ պարագայող հոշակաւոր մտքերը, եւ այս թուականէն սկսեալ ի Ֆրանսա, յ'Անգղիա, յ'Աւստրիա եւ նոյն իսկ յ'Ամերիկա ջրաբուժութիւնը գիտական հանգամանք մը ըստացաւ, եւ աշխարհի բոլոր մասերուն մէջ առողջապահական հաստատութիւններ հիմնարկուեցան, ուր կը գործանուին հազարաւոր հիւանդներ աղքատ եւ ընչեղ գերբամառայելի, պարզ ու բնական եղանակներով: Ջրաբուժական եղանակը կը գիտականացէս զարգացող եւ գրեթէ ամեն տեսակ հիւանդութիւններու դէմ սքանչելի յաջողութեամբ զայն ի գործ ածող անձնաւորութիւններուն մէջ նշանակելի են մասնաւորապէս Ֆլէօրի, Ֆրանց Կլէնար, Թրիփիէ, Պուլար, Վիլիթէրնից, Ռիս, Վէյլ, Տիմարն, Պէնի-Պարէ, Տիւալ, Մաքս Տիւրան Ֆարուէլ, Կէյօլ, Կընար, Արքիպայտ Հուրդըր, Գանէ եւ այլք:

Ջրաբուժական եղանակներ ըսելով կը հասկընանք այսօր. —

1. — Պարզ բաղնիք, 10-43 Կ. ջերմաստիճան ջուրով: Դեղերով բաղնիք, ինչպէս. ցորենի թեփով, կակղեցուցիչ տունկերով, նաշինով, մածուցով, մորմի, սնդոյրատակի, մոլեխիճի եւ ընկուզենիի տերեւներով, կատուախոտի արմատով, թմբի ծաղիկներով, խնկաւէտ բոյսերով, մոսնանիով, կաղնիի, եղեւինի եւ չոճիի կեղեւներով, կալաքարային նիւթերով, ածառով, կիտրոնի, նարնջի կեղեւներով, ծծմբային բազալթութիւններով, սնդկական քլորուկով, այծի կաթով, աղով, ծովու ջուրով եւ այլն:
  2. — Ջրանաղան ջրացայտք ու ջրցանութիւնք:
  3. — Ջրատառութիւն, ջրաթաց բարձիկ, եւ չոր կամ երկ ջուրի մէջ թրջուած բուրդէ վերմակներով խանձարրապատնուած:
  4. — Պաղուկ ջուրով սաւանակալանդում:
  5. — Թաց լաթով, ջրոտ աղով չիւում եւ սպիտակուցում:
  6. — Պարզ կամ բաղադրեալ ջրով գրելի եւ այլ օրինակ ներքին լուացումներ ու ներքստանշում:
  7. — Ստամոքսալուացում եւ այլն:
- Ջրաբուժութիւնը վերջին տարիներս իրեն օժանդակ առնելով կլիքորականութիւնը, մարձումը եւ անանիւր բնական եղանակները, իրաւամբ հրաշալիքներ սկսաւ գործել: Թունաւոր դեղերը օրըստօրէ տեղի կուտան լուսաւոր կեդրոններու մէջ այս հզօր, բուժիչ ու բնապարգեւ ազդակներուն հսկայ քայլերու առջեւ: Արտաքին օժանդիքներն ու ներքին ցաւամոք դեղերն իսկ չ'են կրնար նշմարելի ներգործութիւն մը ընել առանց ջուրին միջնորդութեան ու մաքուր կենցաղավարութեան: Այս եղանակներով կարելի է յաջողակութեամբ դարմանել ազգի ազգի հիւանդութիւններ, նա մասնաւոր բոլոր ջրային հիւանդութիւնները, յօղացաւը, ազդերացաւը, ամեն կերպ տեղերն ու բորբոքումները, անարիւնութիւնը, դալկախտը, ուժամաքութիւնը

հակառակ հեղինակին ողբումներուն կը կարծենք թէ՛ եթէ թուրքիոյ մէջ կայ լաւ բան մը այն ալ օտարականաց տրուած այդ առանձնաշնորհումներն են. քանզի եթէ եւրոպացուց թուրքիոյ բնակութիւնը քիչ շատ բարերար եւ քաղաքակրթիչ եղած է, այդ եւրոպացուց թուրքիա բնակութիւնը կարելի ընողը՝ այդ առանձնաշնորհումներն են եղած:

Տասներորդ երեսին վրայ հեղինակն յիշելէ յետոյ թէ ի՞նչ են այդ առանձնաշնորհումները՝ կը հասնի Տրդ ու Յրդ. բաժանումին «Օտարականի մը սնանկութեան պարագային Օսմանցի պարտապահանջը պարտին սնանկացելոյն պատկանած հիւպատոսարանին առջեւ դատավարել: Քաղաքական դատերու մէջ 1000 դրուան անցող պահանջքի դատեր բնիկներու եւ օտարականացանկներու միջեւ, պարտին տեսնուել աւժամապէս առեւտրական միջազգային դատարանին առջեւ, Հեճերի 1236 բրօթօքոլին համաձայն»:

«Այս երկու վերջինները վերջերս շնորհուած ըլլալով միջազգային օրինաց զարտուղութիւն կը կազմեն: Այս տեսակ առանձնաշնորհումներ՝ որոնք աւրող պետութեան մը նիւթական եւ բարոյական իրաւունքները կը բառնան եւ որոնք հին ժամանակաց մէջ շնորհուած են ի չգոյժ օտարաց շահուց համապատասխանող դատական կազմակերպութեան, պէտք է՛ ծանրանկար յաջող սերունդին վրայ՝ երբ իրաց վիճակը նախազգացն քարտիտուած է եւ աղքատութիւնն ի գործ կը դրուի յիտիկն. արդէն շատ մը օտար հեղինակներ կը կարծեն թէ սոյն առանձնաշնորհումանց բեռը՝ որ կը ծանրանար նաեւ Ռուսիոյն եւ Սերպիոյ վրայ եւ որ վերցուեցան անկէ իբր հակառակ միջազգային փոխադարձ իրաւանց՝ պէտք է՛ որ թոյլատրուին նաեւ ի թուրքիա»:

Պարոն հեղինակին ակնարկել ուզած այդ քանի մը օտար հեղինակներու պարզած միտքն որքան ալ տեսականապէս ճշմարտանման երեւին եւ սակայն գործնական, իրազեկ եւ ճշմարտապէս իմաստասիրող միտքերու առջեւ վաղահաս եւ հետեւապէս իսպառ դատապարտելի են:

Եթէ այդ առանձնաշնորհումները տեղի տրուին ի Ռուսիոյն եւ ի Սերպիոյ ընդհանուր օրէնքներու առջեւ, հոտ ոչինչ կայ զարմանալու զի այդ երկիրներն զեւ երեկ բաժնուած թուրքիոյ յետադէմ գերիշխանութիւնէն՝ ստարապայման կերպով յառաջացած են քան իրենց հրեմանի գերիշխան-պետութիւնը:

Այդ առանձնաշնորհումներն տրուած ըլլալով ա՛յնպիսի ատեն մը երբ երկրին դատական կացութիւնը ո՛չ մի ապահովութիւն կը ներշնչէր օտարականաց շահուց՝ իրենց գոյութեան պատճառն պիտի ունենան ցորչափ կը տիրէ այդ անապահովութիւնը:

Եւ թուրքիոյ, պէտք է յաւելում, այդ վաղնջուց ժամանակներէ հետէ մինչեւ այսօր ո՛ր եւ է յառաջդիմութիւն մը չ'է ըրած իր դատականին քանի որ այն բոլոր նորանոր օրէնքներն որ ժամանակ առ ժամանակ կը հրատարակուին լոկ մեղեւայ ճառ մնալու դատապարտուած են:

Անոնք որ կը կարծեն թէ թուրքիոյ մէջ ո՛ր եւ է օրէնքի ու նորութեան գործադրութիւնը որ շեխաքի օրինաց չ'են համապատասխաներ՝ կրնան արտօնուել նաւատացելոց պետին՝ խալիֆային կողմանէ՝ լոկ կ'երազեն: Այդ օրէնքներն կրնան հրամայուել եւրոպան խաբելու համար, իսկ գործադրուել՝ երբեք: Պէտք է միշտ աչքի առջեւ ունենալ սա կէտը թէ Շէրիաթէն տարբեր նորամուտ օրէնքներ, իբր աւժամեայ ընդունուած են ի թուրքիա, եւ այսպէս վաւերացուած նախորդ Սուլթաններէն, ինչ որ կը հաստատէ այդ օրինաց արուած պաշտօնական անունը «Կաւուլըր Մուազզաթա» (աւժամեայ օրէնք):

(Շարունակելի) ՍՓԻՆՔՍ



յառաջ բերող հիւանդութիւնները, յօրինուածին զանազան գործարաններուն կամ գրութիւններուն պաշտօնավարման մէջ խանգարում պատճառող ախտերը, ստամոքսական ցաւերը, աղեսային վրդովումները, շաքարախտը, սպիտամիզումը, խոլը եւ գրեթէ մորթի համայն զայրուցները: Երկու ամիս առաջ Նոր-Աշխարհէն եկած գիտական լուրերը կը ծանուցանեն թէ այսուհետեւ կարելի է երեկտրաշարժական հրնարքներով Ֆորմաչիոս ներմուծել կուրծքին վերայէն, կամ բերնէն, ներքաշնչամբ, թոքերուն մէջ, եւ հարիւրին՝ եօթնասուն եւ հինգ բուժել հիւժախտը: Իցիւ օգտուել գիտնային թոքախտաւորները բնական դարմաններուն սքանչելիքներէն, եւ ընդլայն չ'քանդէին մարմնոյն միւս գործարանները, թոյներ կուլ տալով:

Կ. ՌԻՉՈՒՆԵԱՆ (Մնացեալը յաջորդով)

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 12 նոյմ. — Կոմս Վալտէրսի կը հեռագրէ որ Ռուսները մեծ յաղթութիւն մը տարին 6000 Պօքսըններու վրայ. Ռուսներու կորուստն է 4 մեռեալ եւ 16 վիրաւոր:

Տէյլի Մէյլ կ'ըսէ թէ Պատէն-Բուէլ զօրավարը աղետապէս կը տառապի թրանսվալական հողին վրայ:

Բարիչ 12 նոյմ. — Խուռն բազմութիւն մը ներկայ կը գտնուէր ցուցասանդէսի փակումին:

Ս. Բէթէրսպուրկ 12 նոյմ. — Չարը Էնփիւէնցայէն հիւանդ է:

ԱԶԴ

Հայ-Լսարան-Ընթերցատուն ընկերութեան յարգոյ անդամները կը հրաւիրուին Ընդհանուր ժողովոյ, որ տեղի պիտի ունենայ ամսոյս 18 ին իրիկուան ժամը ութնին Լսարան-Ընթերցատան մէջ, որ ի Պաղար-Մուրուր, հետեւեալ օրակարգով:

Ընտրութիւն Մայր-Իրանի պակասեալ անդամոց:

Ընտրութիւն Իրաւարար Ատենի: Մասնաւորապէս կը խնդրուի Պատ. անդամներէն որ հաճին ներկայ գտնուել սոյն ժողովոյն, որ ինչ ինչ տեսակէտներով անվրէպ տեղի պիտի ունենայ ներկայներուն թիւը մեծամասնութիւն համարուելով:

Ի Իմաց Մայր-Իրանի Լսարան-Ընթերցատուն ընկերութեան:

Ատենապետ Ա. Ատենապետ

Հրատարեալ Ա. ՊԱԼԵԱՆ

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՕՏԷՍՍԵՒՆ կը հեռագրեն Մօրնիկ Լիցքը թէ՛ Ռուսական մամուլը կ'ամբաստանէ Անգղիան, ըսելով որ այս վերջինը՝ մահմեդական տարրին վրայ իր ազդեցութիւնը աւելցնելու նպատակաւ՝ գերեզմանութեան վրայ աչք կը գոցէ պարսկական ծոցին մէջ: Մասքաթի ֆրանսական եւ անգղիական հիւպատոսներու միջեւ բանակուիներ տեղի ունեցած են այս մասին:

Ռիիթէրի անցեալ օրուան մէջ հեռա-

գիրը կ'իմացնէր դեր-գնդապետ Լը Կալէի մահը Օրանտի մէջ :

Լը Կալէ գնդապետը եգիպտական հեծելազունը կը հրամայէր Թրանսպալ երթալէ առաջ, վերջերս օգնական զօրավար կոչուեցաւ եգիպտական բանակին և շուտով պիտի դար իր նոր պաշտօնը ստանձնելու . բայց ինչպէս որ հեռագիրը կ'ըսէ, Պօթախիլ մղուած պատերազմի միջոցին ըսպաննուած է :

ԼՕՐԷՆՍՕ Մարգէզէն Տէյի Մէյիզարնուած հեռագիր մը կ'ըսէ թէ Պօէր լրատար մը այս նաւահանգիստէն մեկնած է Գայլէր նաւով իրեն հետ տանելով Սթէյն . էն նախագահ Բրիւկէրին ուղղած հեռագիրները : Այս հեռագիրներուն մէջ Պ. Սթէյն կը յայտարարէ թէ Հայթուկային կռիւր ամենարուսն կերպով պիտի շարունակուի նախագահին Եւրոպա մնալիք բոլոր ժամանակը :

ԼՈՆՏՈՆԷՆ 6 նոյեմբեր թուականաւ կը հեռագրեն :

Գնդապետ Լը Կալէ Պօթախիլի մօտ Պօէրները յանկարծակի բերած և ետ մղած է, 7 թնդանօթ, պաշարակառքեր, և մարտասայլեր գրաւած է : Սպաննուած են Լը Կալէ գնդապետը, « Էսթ Բէնթս » զօրագունդէն էնկէլպարի հարիւրապետը, « Սաուլ Ուօլզ Պօրտրըր » զօրագունդէն տեղակալ Վիլիէմ և 8 զինուոր . վերաւորուած են 7 սպայ և 28 զինուոր : Սթէյն և Տը Ուէթ կրցած են փախչիլ :

Լը Կալէ գնդապետը խիստ կռուի մը բռնուած էր որ տեւց 5 ժամ, թշնամեաց թիւը 1000 ի չափ էր Տը Ուէթի հրամանատարութեան տակ : Զօրավար Զարլըս Նօքս որ Տը Լիլի հեծեալ հետեակներու գունդով կը հետեւէր Լը Կալէ գնդապետին, Պօէրները բոլորովին յաղթած է և հարաւ-Արևելքի ուղղութեամբ քանի մը մղան հալածած է : Թշնամին անշատուեր և զատ զատ բազմաթիւ խմբակ շոկատներ կազմեր է : Վերաւորեալ գերիներու մէջ կը գտնուին Տը Վիլիէ և Սթէյնի քարտուղարը : Մեռեալներուն մէջէն Պօէր մը գրտնուած է թեւ կարմիր խաչով, հրացան մը ձեռքը և փամփշտանոցը կիսով չափ պարպուած :

ԿԷԼՏԻՐԱՆՏ նաւը որուն մէջ կը գտնուուի Բրիւկէր նախագահը երեկ Սուէզի ջրանցքէն անցեր է :

Նախագահը խիստ լաւ է բայց աչքի հիւանդութիւնը՝ որմէ երկար ժամանակէ ի վեր կը տառապէր ծանրացած է :

Պ. Բրիւկէր Սուէզի մէջ առած է իրեն ուղղուած բոլոր հեռագիրները, և մեծ ուրախութիւն յայտնած է իմանալով որ իր հայրենակիցները յաջողութեամբ կը շարունակեն հայդուկային կռիւր : Մերժած է ճամբորդութեան բուն ծրագրին վրայ խօսք մը ըսելու՝ բայց հաստատած է որ Պօէրները պահեստի մեծաքանակ ուտելիք և ռազմամթերք ունին, որով պիտի կարենան դեռ երկար ժամանակ կռիւր շարունակել :

Նախագահը բերնէն փախցուցած է որ Զարէն պիտի հիւրասիրուի, որն որ իր մեկնելէն առաջ իրեն սիրալիր հեռագիր մը զարկած է :

Այս պահուս Կէլտերլանտ դէպի Յըրանսա կը նաւարկէ :

ԵՐԿՐԻՍ քնակչաց թիւն է մէկ միլիար 450 միլիօն : Ասիա, որ մարդկութեան օր-

րանն է, 800 միլիօն բնակիչ ունի . այսինքն շուրջ 118 բնակիչ մէկ քառակուսի հազարամէթրի համար : Եւրոպայի բնակչաց թիւն է 320 միլիօն, այսինքն 40 հոգի մէկ քառակուսի հազարամէթրի համար : Ափրիկէ ունի 210 միլիօն բնակիչ, և հարաւային և հիւսիսային Ամերիկա՝ 110 միլիօն : Կղզիաբնակներուն թիւն է 10 միլիօն :

Այս միլիօններով մարդկային արարածներուն մէջ 500 միլիօնը զգեստ կը կրեն, և տուներու մէջ կը բնակին . 700 միլիօնը մարմնոյն վարի մասը . միայն կը ծածկեն և հիւղերու կամ քարայրներու մէջ կը պատուարուին և 250 միլիօնը բոլորովին մերկ կը պտտին և գլուխներն հանգչեցնելու որոշ տեղ մը չ'ունին :

Լ'ԱՄԻ ՏԻԻ ՖՈՒՍՅԷ (ընտանեաց բարեկամ) անուն թերթը հետեւեալ դիտողութիւնը կ'ընէ Ձինական քաղաքակրթութեան վրայ :

« Ձինացիք մեր գաղափարէն շատ տարբեր գաղափար մ'ունին քաղաքակրթութեան վրայ : Անոնք բացարձակապէս կը դատաւարտեն պատերազմը, մինչդեռ երկրիս արեւմտեան մասին մէջ զինուորական ուժը մեծամասնութեան հիացումը կը գրգռէ : Ռուս գիտուն մը, Տօքթօր Մարգօֆ, Ձինաստանը լաւ ճանչցողներէն մին, կը գրէ . « Եւրոպացուց կողմէն Ձինացիներուն դէմ բիրտ ուժ գործածուիլը մեծ չարիք մ'է : Այս միջոցը՝ կացութիւնը փոխանակ բարեւաւելու, աւելի կը վատթարացնէ : Զարիքը հոն է որ մեր կողմէն բարբարոս յորջորջուած Ձինացին մեզ կը նկատէ իբրև բարբարոս : Ձինացին պատերազմէն կը խորչի, և զայն կը նկատէ իբր յատկանիշ բարբարոսութեան : Որքան մենք զէնք գործածենք անոնց դէմ, անոնք այնքան պիտի համոզուին որ բարբարոսներուն ամենէն վատթարն ենք, և՛ հետեւաբար՝ այնքան աւելի ատելի պիտի ըլլանք անոնց » :

—ԵՐԿՐԻՍԷՐ առաջին անգամ ներմուծուեցաւ Եւրոպա, մեծ հակառակութեան բաղխեցաւ, և մեծաքանակ թուղթեր մրտուեցան անոր գործածութեան դէմ : 1678 ին, Հանրի Սալիվօ, իր մէկ նամակին մէջ « վայրենավայել անարգ սովորութիւն » կը կոչէ թէյի գործածութիւնը : Ուրիշ մը կ'ըսէ որ կարծես թէ մարդոց հասակը կը փոքրնայ և անոնց վայելչութիւնը կը կորսուի ինչպէս նաև կանանց գեղեցկութիւնը կը նսեմանայ թէյի միջոցաւ :

—Կեսարացի դրամատէր Տ. Պօրոս Բէլէկեանի այրի Տիկինը Ետի Գուլէի հիւանդանոցին համար 4000 և Մաքրի գիւղաղջկանց դպրոց մը կառուցուելու համար 500 ոսկի կտակած է :

ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԻ ՅՈՒՂԱՐԿԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ . —Բարի-Նույնի մէջ կը կարդանք . Երկու օրէ ի վեր Բարիքի փողոցներուն մէջ շրջիկ վաճառականներ սեւով պատած երկու թերթերէ բաղկացած երգ մը կը ծախեն, զոր կ'անուանեն հրաւիրագիր Յուզարկաւորութեան . « որուն մէջ կը կարդանք . » կը խնդրենք որ ներկայ գտնուիք յուզարկաւորութեան, արարողութեան և թաղման բարիգեան մեծ տօնավաճառին որ ծանօթ է :

1900 ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ անունով, և որ տեղի պիտի ունենայ առաջիկա կիւրակէ ( Նոյ . 11 ի ) կէս գիշերին : Հաւաքումը տեղի ունենալու է մահու տան մէջ՝ Թուռ Էյիֆէլի տակ : »

Յետոյ կուգան մի քանի տանեակ ուտանաւորներ, մէկը միւսէն հետաքրքիր, քննադատող և ծիծաղելի : Բարիքի ժողովուրդին համար միշտ նոր և մեշտ զուարճացնող բաներ պէտք են, այս նորութիւնն ալ յաջողակներէն մին է և ամեն հետաքրքիր անկէ հատ մը կը գնէ զուարճանալու համար :

ՀԱՅԵԼՈՒԿ ԵՐՐՈՐԻ

Կուգամ շուտ, գալս չ'են խորհիր, կը մեռնիմ ծնածս ատեն, մէկը մահս՝ իմ ետեւէն, կը գուժէ աղմկալից, ու՛ վաղանց կեանքիս վրայ, ամեն ինչ չորս դիս կուլայ :

Ֆ. Բ.

Մ . Խ . Լուծողին մէկ օրինակ գրչի ըզբօսանք :

ՀԱՅԵԼԻՆ ԽԱՐՈՒԱՆ

Բարիքի Շօմէնիլ փողոցին մէջ տան մը բնակիչները անցած գիշեր ունեցան յուզմունք մը, որուն նմանը շատ չ'պատահիր : Ժօղէֆ Տամալ անունով վարձակալ մը, վաճառականութեան ներկայացուցիչ, երեկոյթը բարեկամներուն հետ անցընելէն ետքը, սունը վերադարձաւ կէս գիշերէն ժամ մը ետքը : Խիստ զուարթ էր, և աստիճանները ցատկոտելով ելաւ և մինչև չորրորդ յարկը, ուր կը բնակէր :

Բայց հազիւ դուռը բացաւ, սարսափի աղաղակով ետ քաշուեցաւ :

Դէմ առ դէմ գտնուած էր վայելչապէս հագուած մարդու մը հետ որ իր հայելապահարանը խուզարկելու վրայ էր :

Տավալ իսկոյն դուռը գոցեց և ելլելէն աւելի հապճեպով վար իջաւ՝ տակնու վրայ եղած : Հոն դռնապանը արթնցուց և եղելութիւնը պատմեց : Իռնապանը կարծիք յայտնեց որ թերևս գողը մինակ չ'էր և խոհեմութիւն պիտի բնէին իրենց օգնական փնտուելով : Հետեւաբար, շատ մը վարձակալներ արթնցուցին խնդրելով որ զինուորին Պահ մը ետքը գարձեալ վեր ելան առաջնորդութեամբ դռնապանին, որ վաղեմի զինուորական մ'էր յաղթանալով, և որ խումբին առջեւէն կը քալէր՝ մէկ ձեռքով սուր մը և միւս ձեռքով մում մը բռնած :

Փոքր վարանու մէ ետքը, յանկարծ դուռը բացին և դռնապանը ներկայացաւ . . . բայց ան ալ դէպի ետ ցատկեց, տեսնելով գող մը որ բամպակեայ գտակ մ'ունէր և սուր մը կը ճօճէր . . .

Մարդերը խորհրդակցեցան : Կողերը որոնք ապահովապէս գէթ երկու հատ էին՝ չ'էին կրնար փախչիլ : Բայց վտանգաւոր էր անոնց վրայ քալել ճակատ առ ճակատ : Լաւագոյն էր երթալ քաղաքապահներ բերել . անոնք միայն իշխանութիւն ունէին գործելու :

Վարձակալներէն մին գնաց և՛ տասը վայրկեան ետքը՝ վերադարձաւ երկու ոստիկանով : Ներկայր Աեծապէս հանգարտեցան համազգեստաւորները տեսնելով : Խրմբակը մէկ կողմ քաշուեցաւ և ոստիկանները՝ դուռը բանալով՝ հշարնայական ձայնով մը պոռացին :

—Յանուն օրինաց անձնատուր եղի՛ք : Ո՛վ զարմանք, իրենց դէմը գտան համազգեստաւոր երկու ոստիկան :

—Չափազանց յանդուրձութիւն, գոչեց ոստիկաններէն մին՝ իր նմանին օձիքէն բըռ-

նեղու համար ձեռքը երկնցնելով : Բայց ձեռքը դպար ցուրտ և սահուն մակերևույթի մը . . . :

—Հայելի է, մրմնջեց, ապուշ ապուշ : Արդարև հայելի մ'էր, պահարանին հայելին, որուն դուռը կիսաբաց ձգած էր ժողովի ճակատ : Դուռը բացուած էր և մուտքին դիմացը կը գտնուէր, այնպէս որ ամեն ներս մտնողը ինքզինքը կը տեսնէր : Դուռապանի և ոստիկանի կերպարանափոխութեան գաղտնիքը հոն էր :

—Եւ խորհիլ որ ամենքնիս ալ գող կարծուեցանք, գողեց ճակատ :

—Ի՞նչ է բժշկութիւնը :  
—Արհեստ մարդասպանութեան, առանց ոստիկանութեան գլուխը ցուցնելու :

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

Table with 6 columns: ԿԻՐԱԿԻ 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1900. Rows of numbers: 648 2684 3645 5341 66 292, 855 1037 1577 2384 2841 2997, 3037 3111 3288 3716 5085 5521, 6016 6096 6212 6411 6524 6774, 6824 7150 7739 7854 8236 8983

ԻԳՆԱՏԻՈՍ Կ. ՍԱՐԱՑԵԱՆ

ԳԵՐՁԱԿ  
ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ  
Շարա Պոսպ - էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգղիացի վաճառական - դերձակ ԺՕՆ ՔՕԼԱԲՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելագոյն հմուտ եւ փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրաին դիմացը, նորաչէն խանութիւնըն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ : յաճախորդը ըստ ամենայնի գոհ պիտի մնան, արհեստի նրբութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով, եւ մանաւանդ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր եւ ճաշակաւոր զգեստներ ունենալով :

Ա Ձ Դ

Եզրպտարնակ ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով՝ այժմ Եզրպտոսի համար Արեւելեան Մամուլոյ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան, որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին :

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, գիտական, պատմական և այլ փրկական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով :

Քաղաքէս հեռու ընակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յլեն փորձիկ գումար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յԱզգ. վարժարանն ի Տարպէլ-Կիւնէնա :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԾԱՄԱՆԱԿԸ ՊՐԱՍ Ե

Անգղիերէն լեզուի ծանօթ ուսուցիչ Գառնիկ Էֆ. Սիրունեան գոհացում տալու համար շատ մը երիտասարդաց փափաքին՝ Էօլպէքիյէ Մօնթէ Քաւլօ Պօտէկայի ճիշտ դէմը իւր տան մէջ Անգղիերէն լեզուի դասեր տալ սկսած է :

Նորագոյն մէթոտով կ'ուսուցանէ միմիայն վեճ ԱՄՍՈՒԱՆ կարճ ժամանակամիջոցի մէջ լաւ կարդալ, գրել և խօսիլ սոյն ամենակարեւոր լեզուն :

Ամեն օր երեկոյին ժամը 5 էն վերջը կը գտնուի իր տունը, ուր կրնան դիմել նաև անգղիերէն աղերսագիր ևն. գրել տալու պէտք ունեցողները :

Փափաքողաց տուները այցելութեամբ դասախօսելու պատրաստ է :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

Հիմնաւ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԶԲԸ

Օսկանիյէ դեղատանիս դիմացի փողոցին մեջ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարսեր, Շրջաբերականներ, Գիտեր, Հրապարակներ, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ :

Ա. ՊԱՂԵԱՆ Մ Ա Թ Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն) Գին 50 ՍԱՆԹԻՄ ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՐԱՄ 9 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 842 7930 1254 6660 6149 8280, 2954 2485 7246 7975 8340 1210, 1 6855 2569 1569 7919 6637, 6564 8839 7720 2458 7744 4611, 4933 3841 9906

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՔԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԿ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատարեանց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ այլապէս ուրիշ օր և է ընդունութենէ մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՄԻՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ ի նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ. պատի և քօնսոյի բազմազան Բանտիլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Ֆօնօկրաֆներու :

ԱՌԱՋԱԽՏԻ ԴԱՐՄԱՆ

Նախորդ դարերու մագաղաթեայ բըժըղկարաններէն քաղուած և խիստ շատ փորձերէ վերջ, օգտակար արդիւնք ձեռք բերելէ յետոյ, կը փութամ յայտարարել աւազախտի հիւանդութեամբ տառապողներուն և մասնաւորապէս դեղագործներուն և բժշկաց՝ որպէսզի ուշագործութիւն դարձնեն սոյն օգտակար դարմանին վրայ :

Աւազախտի միակ դարմանն ունենալու համար պէտք է դիմել ստորագրելոյս հասցէին ի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ, ՄՈՒՋԻԿԻ ՉՕՐԱՆՈՑԻՆ ԴԻՄԱՑ — ՄԷՅՈՒՆ ԱՊՏԻՆ :

Գիները

- 10 ֆրնդ մէկ բաժին աւազ ունեցողի
- 20 » երկու » քար ունեցողի
- 30 » երեք » արմատացած հիւանդութեանց :

Սոյն դարմանը գործածուած օրէն իսկ պիտի տեսնուի առողջութեան նշաններն և քիչ ժամանակէն կատարելագոյն առողջացած պիտի ըլլան այս հիւանդութեամբ տառապողները :

ԴԱՆԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ

ՀԱՒԱՔԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՈՐԷՆ Լ. ԵՂԱՋԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աջակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն դնել փափաքողներն կամ բաժանորդագրուել ուղղութեան, կրնան դիմել Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր - Տնօրէնին :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յԱզգ. քանդակար :